

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ աօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւններ համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԻԹԻՆ

Համերայնութեան պահանջ.— Ներքին Տե-
ստիկութիւն. Մամուլ. Նամակ Գանձակից. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՆ. Առաջնորդական ընտրութիւն.
Արտաքին լուրեր.—Հեռագրութիւն.—ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՆԵՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիւղա-
կան ցարերից.

ՀԱՄԵՐԱՅԻՆԻԹԵԱՆ ՊԱՆԱՅԻՆ

Թիֆլիսում այս օրերս մի քանի հան-
դիսաւոր ճառեր խօսվելիք ազգերի
համերայնութեան խնդրին մասին: Առիթը
Գ. Սուրբազանցի «Պէպո» կամեղիայի յօդ-
ւանն էր: Թէ վրաց եւ թէ հայոց բեմում
ժողովված ներկայացուցիչները մի քանի
անգամ եւ առանձին ուժով շնչեցին հա-
մերայնութեան գաղափարի վրա: Օպո-
ւիստի, Պալաւով, Սուրբազանցի, Նիկոլայի եւ
նորիցս իրանց ճառերի մէջ առանձին
համերայնութեան կանգ առան Կովկասում
ապրող ազգերի փոխադարձ օգնութեան եւ
գործակցութեան անհրաժեշտութեան վրա:
Թէ չանմի են Կովկասին այն բոլոր անձինք,
որոնք սերմանում են նրա ազգաբնակչու-
թեան մէջ փոխադարձ անփոխադարձութեան,
ատելութեան եւ չարահամութեան սերմեր:
Ռուս, հայ, վրացի, թուրք եւ ուրիշ ազ-
գեր պէտք է փոխադարձաբար միմեանց
յարգեն եւ միահամուռ ոյժերով նպաստեն
լայն եւ մարդասիրական գաղափարների
տարածվելուն հասարակութեան բոլոր
խաւերում: Ազնիւ աշխատանքը, իդէալա-
կան գործունէութիւնը, օրինակ Պէպոյների
պաշտպանութիւնը, Զիմզիմովների արածնե-
րի մեղմեցումները եւ ուրիշ այլ տեսակի դէպ-
քեր գտնում են բոլոր ազգերի մէջ համա-
կողմնութեան աշխատանքի պատրաստութիւն
համերայնութեան համար արգելանք հղոյ:
Ոչ մի տեղ զուցէ այնքան կարեւոր եւ
անհրաժեշտ չէ համերայնութեան քա-
րոզը, որքան Կովկասում: Ամեն մի քայլի
վրա մենք գտնում ենք միասին ապրող մի

քանի ազգութիւններ, որոնք տարբերվում
են իրարից կամ ծագումով, կամ կրօնով,
կամ լեզուով, կամ կուլտուրական սովորու-
թիւններով եւ կամ միանգամայն մի քանի
առանձնաբերականութիւններով: Ոչ մի ազգ չէ
կարող առանձին ապրել, առանձին իր
համար կղզիացած վիճակ սահմանել եւ իր
զրացի ազգերին անտես անել եւ ար-
համարհել: Ազգերը ազգում են միմեանց
կեանքի վրա փոխադարձապէս իրանց դա-
կան կամ բացասական կողմերով:
Որքան էլ դուք ցանկանաք առաջ գնալ,
այնուամենայնիւ պէտք է կաշկանդված
լինէք ձեր հարեան ազգից, եթէ նա չէ
համակրում ձեր գործին: Դուք չէք կա-
րող երկրի մէջ, օրինակ, առողջապահական
բարեկարգութիւն հաստատել, երբ այս եւ
այն տարրը չէ ուղղում համակարգվել ձեր
զաւթանքներին եւ իր կեղտոտ ու ստոր
նիւստ ու կացով բոյներ է պատրաստում
ամեն տեսակ վարակիչ եւ սարսափելի հի-
ւանդութիւնների համար: Դուք չէք կա-
րող անգործ եւ աշխատանքի վրա հիմնված
կեանք ստեղծել, եթէ ազգութիւններից
մէկը չէ ցանկանում ձեզ հետեւել եւ պահ-
պանութիւն ձեր համայնքի մէջ գործութիւն,
աւագակութիւն, աւարառութիւն եւ մար-
դասպանութիւններ: Մի ազգի արածը
քանդում է միւսը եւ այդպիսով առաջա-
դիմութեան գործը առաջ չէ գնում:
Ազգերի համերայն զործունէութիւնը—
զաւթանքների անհրաժեշտութեան պա-
հանջն է: Որքան շուտ կը հաստատվի այդ
գաղափարի փրկարար նշանակութիւնը
մարդկանց ուղեղներում, այնքան էլ վաղ
կը սկսվի նրանց կանոնաւոր եւ անարգել
առաջադիմութեան գործը: Այն ազգը, որ
չէ ցանկանում այդ գաղափարը ընդունել,
վնասում է ոչ միայն սօսար ազգերին,
այլ եւ իրան, որովհետեւ կաշկանդվող շըր-
ջապատողների շարժումը, նա կաշկանդում
է եւ իր գործունէութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Նախագահը ներկայ «կրիզիսի» մասին
դատողութիւններ են սկսել լրագրների մէջ:
Թիֆլիսի երկու ուսուցիչ բոլորովին հա-
կառակ կարծիքի են: «Կառաշ» լրագրը բը-
նական է համարում ներկայ ճգնաժամը, նկա-
տի առեւտրով այն տենդային իրարանցումը, որ
սկսվել էր Բագուում վերջին տարիները: Ամեն-
քը աշխատում էին, որքան կարելի է, շատ
նախ ատանալ, շատ հարստանալու համար
նախք էին որոնում ամեն տեղ. խելագար
գնել էին առաջադիմում նոյն իսկ այնպիսի
հողերի համար, որոնց մէջ նախ լինել կա-
կածելի էր: Արդիւնաբերութիւնը մեծացաւ
հակադրական չափերով, մինչդեռ պահանջը չու-
կայում այնքան մեծ չէր: Առաջ եկաւ այն հան-
գամանքը, որ անհամեմատ շատ նախք է
ստացվում, քան պիտի ծախվի: Եթէ Բագուի
նախքը արտադրանքներում աւելի շատ չուկա-
ներ նուաճէ, այն ժամանակ գները, ի հարկէ,
կը բարձրանան: Բայց այդպիսի նուաճում կա-
տարելու համար, Բագուի նախքը պէտք է որ
յարմար ճանապարհ ունենայ արտադրանքն
գնալու: Մի միակ ճանապարհը Անդրկովկա-
սեան երկաթուղին է, բայց նա տեղափոխա-
կան այնքան մեծ միջոցներ չունի, որ կարո-
ղանայ բաւարարութիւն ապահով արտադ-
րանքների պահանջներին: Լրագրը ներկայ դը-
ժուարութիւնը դուրս դալու միակ միջոց
համարում է արդիւնաբերութիւնի բարձրացումը:
Դա ինքն ըստ ինքեան կատարվում է այժմ
եւ, ուրեմն, պէտք է յուսալ, որ այժմեան
տագնապը երկար չի տևի:—Բոլորովին ուրիշ
կարծիք է «Тифлис. лист.» լրագրի թղթա-
կիցը: Ռեանչաններով զինված նա ցոյց է տա-
լիս, որ գործութիւն չունի այն պատճառը, որ
վերեւ բացատրեցինք: Պահանջը, առում է նա,
ոչ միայն կայ, այլ եւ աւելացել է անցեալ
տարվայ համեմատութեամբ, եւ գները ապառ-
ման շուկաներում այժմ էլ լաւ են: Ուրեմն,
պահանջի պակասութիւնը չէ դժբաղդութեան

պատճառը, ոչ էլ այն, որ Բագուի սկսել է
աւելի շատ նախք արտադրել, քան պահանջ-
վում է: Բայց որն է իսկական պատճառը:
Ամենքին, ի հարկէ, գեղեցիկ կերպով
յայտնի է խելացի առեւտրի հիմնական կա-
նոնը. գները այնտեղ, ուր էժան է, եւ վաճա-
ռել—ուր թանկ է: Այժմ երեւակայեցէք, որ
երկնքի կամքով Բագուի բոլոր նախքերը
նապոյտների վրա դրված են երեք-չորս
ֆիրմաներ: Ամեն բան եւ ամեն ինչ հա-
տակվում է նրանց. նրանք ամենակարող են.
Նրանց կամքը—օրէնք է նախքային ամբողջ
աշխարհի համար. ինչ ուղղում են, այն էլ
անում են: Կատարեալ տիրապետողներն
եւ միջոց, ունենալով հնարաւորութիւն հետե-
ւելու առեւտրի այդ հիմնական կանոնին,
այդ ֆիրմաները չեն կամենալ օգուտ քաղել
իրանց արտադրած գործիւնից, ինչու եւ
ոչ համար չը պիտի կամենան: Տնտեսական
կուր մէջ «խոջայի» խօսքերը եւ թիւո-
ղապատութիւնը: Ուստի եւ նախքային ար-
տադրութիւնների գները պիտի ընկնեն
Բագուում, —ապահովելու է տիրապետողնե-
րին. իսկ արտադրանքներում եւ Ռուսաստա-
նում գները թէ բարձր են եւ թէ ամուր,
որովհետեւ տիրապետողները այնտեղ ծա-
խում են իրանց՝ չնչին գնով առած ապ-
րանքը:
Եւ թղթակիցը պատմում է թէ ինչպէս է
կատարվում այդ գործը: Ստացվում է մի պատ-
կեր, որ մենք նկարագրեցինք մեր անցյալ տե-
ստիկութիւններից մէկի մէջ,—այն է կատուների
եւ մկների, կլանողների եւ կանգնողների պատ-
կերը: Բայց «կատուի» խաղը մկան մահ է—
առում է իմաստուն առածը: Բագուի կատու-
ների խաղը մահ է տառնեալ հազարաւոր մարդ-
կանց համար: Սարսափելի է այժմ բանուոր
դասակարգի դրութիւնը. գործերը կրճատվել
են եւ օրավարձով հայ աշխատողների խմբերը
թափառում են փողոցներում. բանը այնտեղ է
հասել, որ, ինչպէս վկայում է թղթակիցը,
հարկաւոր է հասարակական բարեգործութեան
դռները բաց անել այդ խեղճների համար, ստո-
րագրութիւն սկսել, փող հաւաքել, մի խօսքով,
օգնել: Խեղճվում են եւ մանր գործերը, մա-
նաւանդ այնպիսիները, որոնք սկսվել են ա-
ռանց դրամագլխի, լոկ մուրհակների, փոխա-
ռութիւնների միջոցով: Այդպիսի գործեր, ինչ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒԳԱՅԻՆ ԾԱՌԵՐԻՑ

(Ականատեսի յուշատետրից)

Գիւղ եւ լրագրի, գիւղացի եւ մամուլի
Որքան միմեանցից հեռու, խորթ բաներ էին
մի քանի տարի սրանից առաջ: Գոնէ այդպէս
էր մեր գաւառում: Գիւղացու ընթերցանու-
թիւնն Աւետարանից ու Ժամագրքից զէնը չէր
անցնում: «Էփէմերոն», փիլիսոփայութեան
այդ խորհրդատու, միայն «խորհունկ» տիրացու-
ներին էր մատչելի, որոնց մատով էին համ-
րում եւ գիտութեան զէնքի ձեւին հասած համա-
րում...
Բայց այսօր ամեն մի գրագէտ մեր գաւա-
ռում հետաքրքրվում է մամուլով եւ նոյն իսկ
անգրագէտները հարց ու փորձ են անում, թէ
«ինչ կը գրէ զագէթը»: Ի հարկէ, մեր գիւղե-
րում դեռ լրագրերի չեն ստանում, փող չեն
վճարում, դա դեռ նրանց համար հայ ընտրի,
անհրաժեշտ պահանջ չէ դարձել, (մեզանում
դեռ շատ ու շատ սերտուկաւոր մարդիկ կար-
գում են, եթէ միայն ձրի են ձեռք գցում).
բայց որ մամուլը, լրագրական խօսքը ժողո-
վրդականանում է, դա անուրանալի է:
Եւ պարզ է. գիւղացին, ստուգված, տանջ-
ված գիւղացին, իր լացի, լուռ մոռուտի արձա-
գանքը դառաւ մայրենի մամուլի էջերում: Գրի-
չը նրա «թոյլ դամարին» էր գիւղի ու արնոտ
վէրքերը ձեռնել, խառնաշորել: Գիւղացին ապ-
չեց, չը հաւատաց իր սեփական ականջներին,
երբ առաջին անգամ լսեց, որ իր չալակը
հեծած, սուր ճիւղանքով իր կոկորդը սեղմող

«տոկի հորթերին», որոնց նա «աղա» անուան
է ապիւս, ձեռք մեկնող է եղել, «տոկի հորթե-
րին», որոնց ինքն ակամայապաշտում, խունկ էր
ծխում... Բայց պողպատի գրիչն անսիրտ էր,
նա սուր սուրբի պէս բացեց այդ բռնաւոր
կուռքերի սիրտն ու թափեց հրապարակի վրա
նրանց գարշիլի փորն ու փորտիքը: Ամենքը
տեսան ու ապշեցին: Գիւղ էր մնում դարձեալ
չը հաւատար դարձր շարունակ այդ «վիշապ-
ներին» կերակրող գիւղացին, բայց երբ երկ-
չոտ հայեացքը յառեց իր առաջ տապալվող
հէշներին, սթափվեց իր դարեւոր խոր միա-
փից ու մի թեթեւ ժպիտ, առաւօտայն մատաղ
արշալոյսի լուսաստղի պէս, ցոլաց նրա կնճռոտ
դէմքին... Ժպիտ, որ կատարեցրեց մահեմբձ
կուռքերին, վիրաւոր վաճառքներին...
—Վարժապետ ջան, ջանք, գեղեցիկ, ինչու
պէտք է, որ սաղ գլուխդ աւետարանի տակ
կը դնես, քեզի ինչ, որ ապանը (առիւծը) դաւ-
չանին (նապաստակին) կը խեղդէ... Կրնաս մէ
համ ա դու ճանկդ ցիլի փետտէ, անուշ էրէ,
մորդ կաթին պէս հալալ է: Քնած ապանն
ինչի կը դարձնենես, կատարեցնես, որ էզվոյն
ու (վաղը) քեզի խեղդէ: Մեծունանց խօսքը
չիտես, որ «աշխարհը դմակ է, մարդը դա-
նակ», կըրնաս կորէ ու կեր: Անցի մէկին
թեւին տակը, կըրնակդ ամուր դայի (ժայռի)
պէս տուր կըրնակին ու քէֆիդ աչէ... Ինչու
պէտք է, աղաւթ, գագէթ ու զեպալամ (գրիչ),
կուր ու դաւաճալու... Այն, Տեփան աղա, «աս-
լանք» կը կատարի, կը բռնայ... Նա կը ճգնի
նչ միայն իր օրն ամփոփողին, այլ եւ ամբողջ
աշխարհը կուլ տալ, արեւն ու լուսինն էլ կը-
լանել, եթէ նրանք փորձեն մղկատացող օրն
իր ճանկերից փրկելու... Բայց այդ ճանկերը
վաղուց բթացել են եւ յուսահատ ճանկոթից
զատ սոյնիչ չեն կարող անել: Մենք կը սիրով

տաննեք այդ «պառաւած ապանին» ճակատա-
գրական ճանկոթիցը, բայց լուր... Երբէք թող
կատարին, գործունան, գարշիլի ունեցող թող
ամպերի որոտը խաղցնեն, թող խալեն մեր վեր-
ջին սեւ ու չոր պատառը, բայց մենք չենք
լուր... Աշխարհը լայն է ու աշխատող մարդիկ
քաղցից չեն մեռնի...
Երկրաշարժն ու մոլորակները, խեղճ գեղջուկի
արիւնն ու արցունքը խուլ ու մունջ Ախալ-
քալաքը յանկարծ յայտնի դարձրին հասարա-
կութեան: Ո՛ւ՜՜՜՜ պէտք էր, թէ կովկասեան
հսկայ շղթայի խուլ քերթերից միմեան, սեպ
Արեւի ձիւնոտ ծոցում, մի գաւառակ կայ օտո-
ցապատ բլրակների մէջ խուլված: Բայց նը-
րան աւելի համբաւաւոր դարձրին մարդ-
մոլորակները, գագէթ-տղութիւնները, որոնց արիւն-
քամ գոնիւր ստանալու վայնասունն ու լացը,
մերձիմահ մղկոտը երկինք բարձրացան
արդարութեան, ճշմարտութեան գահի առաջ
բողբոջու: Բայց բոլորնու, արջի, մարդ-գա-
զանի, մարդագէլի ինչ փոյթն է այդ:
Տանեալ գիւղերի մոլոր մարաւ, անօթի
մարդկանց լացն ու աղաղակը երկինք հասաւ,
ժայռերն ու ապտառները ծակեց, բայց չը
կարողացաւ թափանցել մարդ-գագէթների դար-
չիլի սրտերը: Մէկը քաղցից գետն է դիմում,
միւսը պարանով խեղդվում, երրորդը ժայռից
զլորվում: Արուի աղի փոյթը չէ: Խորասանի
թանգագին խալու վրա ծալապատիկ ծանր ու
մեծ բազմած՝ նա ինչ-որ թղթեր է չորտում,
խնամքով թերթում, մէկ-մէկ շովջկում: Դրանք
Արուի աղի ծալիւն քրտնեքի վաստակը,
«մեծ մեծ գործերի» վկայագրերն էին, որ
սկսվում էին լուր եւս, ներքոյ ստորագրելու, վեր
ստի եւ պարտ մեծ... սովորական նախաբա-
նով. անչուք, հասարակ թերթեր, համառոտ
զրկած, սակայն ամեն միւր նրանցից մի դժ-

բաղդ ընտանիքի պատմութեան սեւ էջն էր
կազմում: Գիւղացու դառն օրերի պատմա-
գրութեան այդ լուր յուշակոթիները բոլորն էլ
մաքուր, ապիւսակ, երեւի, նոր ժամանակի գործ
էին... Բայց ոչ, նորութիւնը դրանից չէր
նրանց աշխուրջ տէրն ու խնամակալը, հմուտ
մասնագէտի պէս, շատ խնամքով էր վարվում
նրանց հետ. երեք ամիսը մի անգամ մէկիւմ-մէ-
կիկ նորոգում էր նրանց ու հնի վրա մի նոր
սեւ էջ էլ աւելացնում, մէկի կեանքը, օրն ու
արեւը սեւաշնում...
Մի երեկոյ, սեւ ու մութ երեկոյ, Գ. Գիւղա-
ցի Մ. Մ. Օ. Մ. կորաւ: Մի շարք էր, ինչ
նա խելագարվել էր, «խեղճ թուրքեր...» Եւ
նվ լինէր, ընթերցող, որ չը խելագարվել, նրա
արտ ու արտուր, վար ու ցանքը անկուշտ
ճիւղն կերաւ, տան կղած-չեղածը մի կտոր
չոր հացի արվեց, միայն, միմիայն մի զոյգ եղ
խնայեցին՝ բերելից կորեցին, որ դարուր, թէ
Աստուած կամենայ, իր ցանքս անեն, արօրն
առիւթ չը թողնեն, այն էլ անգութ Արուի
աղան տարաւ պապերի պարտքը տեղ ու
բարեկց իր ժողոված ծալի ծալ պատմագրու-
թեան սեւ էջերից մէկի վրա... Տունը դատարկ-
վեց, ընտանիքի վերջին յոյսն էլ կորաւ, ինչ
անէր խեղճ Օ. Մ., որ ինքն էլ չը կորէր...
Բայց նրան երկար չորոնցից, երկու օր յետոյ
գտան նրա խեղդված, կապտած դին գիւղի ա-
ռուակում... Բայց Արուի աղի ինչ փոյթն է:
Չատիկ է, նա պատրաստվում է հաղորդվել
մարդասիրութեան Մեծ Գարոնի փրկարար
մարմնով ու արիւնով...
Պատմածս, ընթերցող, ոչ փափաղանցութեան է
եւ ոչ ֆանտազիայ, այլ իրողութիւն, որ ցերե-
կով կատարված իրողութիւն է:

Ջաւահիր

պէս յայտնի է, չափ են սկսել Բագրուս վերջին տարիներու Այծմ մի ընդհանուր գերեզման պիտի կանգնեցնեն:

Միթէ ճիշդ է նկատված ներկայ տառնապի բուն պատճառը: Միթէ իրաւացի է, որ մի ամբողջ արդիւնաբերական աշխարհի եւ նրա բերուաւոր աշխատողների ճակատագիրը մի քանի հատ ուժեղ թափերի մէջ է գտնուիւմ: Հաւատալ արդեօք թէ այստեղ չը կան տնտեսական աւելի խոր պատճառներ եւ նաւթային ամբողջ տառնապը կայանում է այն բանի մէջ, որ կանոններին կանոններ են հարկաւոր:—Չը կրնանք Եթէ ճիշդ է այս բոլորը, ինքն ըստ ինքեան հասկանալի է դառնում, թէ ինչ վտանգներ են սպառնում մեր երկրի ամենախոշոր արդիւնաբերութեան: Այսպէս շարունակել նշանակում է ընտելութիւն հաստատել հրաբուխի վրա: Եւ եթէ բանը այդպէս զնայ, Բագրուս մի ժամանակ կը ներկայացնէ մի լուս գերեզման, որի վրա նրա տոմ կը լինեն երեք-չորս հատ խոշոր կատուններ...

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Ապրիլի 27-ին

Միջոցաւոր, որ իր անտակ կնոջը սպանել էր, երկու օր ոստիկանատան մէջ բանտարկված մնաց եւ ապա երախաւորութեամբ ազատ արձակվեց: Անտակ կնոջը, անթիւ հետաքրքր-քրոջները ուղեկցութեամբ, թաղեցին առանց քահանայի հայոց գերեզմաններու:

Հաղարատը «Նամուսով» կանայք, օրիորդներ հին եւ նոր սերունդները—բերանը կայած պառաւ կնոջից սկսած մինչեւ Պարիզի վերջին մօղայով հաղնված հայուհիները — խումբ-խումբ գնում են դէպի հայոց հանգստարանը, անբաղձ կնոջ գերեզմանի վրա սառը ջուր խը-մեղում, կամ հետները բերած մի-մի թէփիչ կամ չիչ ու բաժակ վրան կորտաւում, իսկ ոմանք սատկած հաւեր են բերում, նրա վրա թաղում, շատերը հող են հետները վերցնում, տանում տուն՝ տան միւս անդամներին հողաջուր խը-մացնելու: Այս բոլորը, ըստ գանձակցու հրաշալի հասկացողութեան, զեղ է բոլոր վա-խեցածների համար: Ո՞վ է անում, թէ գանձա-կեցի կինը առաջադիմութեան հսկայական քայլերով չէ առաջ ընթանում:

Իսկ արական դասակարգը, անշան բացառութեամբ, նորաբանում է քաջ մարդու վարմունքը—նրա կտրու մատաղ, իսկ ոմանք մէկը, հայտնի իր նրա կերպին էլ, խմածն էլ—աւելացնում է միւսը:—Նրա ձեռքը պահած, աղաղակում է երրորդը եւ չորրորդը: Հայ կի-նը հանգստարանում, անտակ կնոջ գերեզմա-նի վրա ցատկերով, կոխկոխելով, զգեստազետոն է առնում, իսկ հայ տղամարդը սպանողի ձեռքն է պահում: Եւ չը կայ մէկը, որ ասէ նրա վարմունքը վատ բան է:

Իսկ «Նամուսով» ամուսինը, փողոցում սրա նրա խանութում նստած, խորտաբար պատ-նում է, թէ ինչպէս մի անպաշտպան կնոջ, զոհերը ներքի կողպելով, սրախողող է արել չը լսելով այդ կնոջ աղաչանքը ու պաղտաւն-քը, եւ ամեն մի հարուած հասցնելիս հարց է տուել՝ ճիշդ կը լրբանա՞ս: Կինը թէեւ մեղայ է եկել, բայց արիւնածարաւ ամուսինը չէ խնա-յել խեղճի կեանքը: Օրէնքը թէթեւ պատիժ է անում կնոջ անպաշտպան թէ ծանր—այդ մասին չէ խօսք: Կինը սպանեց, մարդը գուցէ ան-մեղ ճանաչվի, անպարտ արձակվի, թուրքն էլ անմեղ է հօ անմեղ: Բայց կայ մէկտեղ մի ուրիշ անձնաւորութիւն, որի վրա է ընկնում այս գործի ամբողջ պատասխանատուութիւնը, դա այն մարդավանդան է, որ ներկայումս ըն-կած է Բագրուս, երեւի, նորանոր օրերի է ման գալիս նոր ընտանիքներ դժբաղդացնելու համար:—Սա էլ հօ բոլորովին անմեղ է...

Իմ տուած հարցին, թէ ինչու սպանեցիր, քանի որ կինը թէ մարմնաւոր իշխանութեան առաջ եւ թէ հոգեւոր հայրերի ներկայու-թեանը յանձնատու է եղել իր անառակու-թիւնը, հետեւաբար օրէնքը քեզ դիւրին թոյլ կը տար ամուսնանալ—ներկայ եղողներին մէ-կը շատ իրաւացի կերպով նկատեց, որ սպա-նութիւն գործելով, թէկուզ մի քանի տարի բանտերում փթի էլ, դա աւելի հեշտ է, քան թէ գործը ձգէ մեր սիմօնական հոգեւորական-ների ձեռքը: Սրանց նման հասարակ մահկա-նացուների ամուսնալուծութեան գործը այն-քան էլ հեշտ չէ լուծումն ստանում: Սա այն անձանց թուում չէ, որոնք բաղդ են ունեցել թիֆլիսում մի հեղինակաւոր քահանայի ա-ջակցութիւնը վայելելու:

Եւ միթէ նրա ասածը սուտ է: Վերցրէ՛ք

հէնց Գանձակում պատահած անառակութեան երկու դէպքերը, որոնցից մէկը յիշեալ քահա-նայի աջակցութեամբ իր լուծումն ստացաւ, իսկ միւսը մի աղքատ կին է, որի ամուսինը նրա չըբեր լինելը պատրուակ առնելով, երկրորդ կին է բերել եւ հրապարակով կենակ-ցում է նրա հետ. չքաւոր օրինաւոր կինը, մի քանի տարի հոգեւոր իշխանութեան զոհերը ու ատենները մաշելուց եւ Կորին հայր սուրբի ստերը երկար ժամանակ մարսելուց յետոյ, ստիպված եղաւ զիջանել բարեկամների սպանալիքներին ու ինքն էլ սկսեց կենակցել մի երիտասարդի հետ:

ՆԱՄԱԿ ԽՄԻՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, ապրիլի 20-ին

«Մշակ» լրագրի 77-րդ համարում գետեղված է մի յօդուած ներկայ տարվայ սկզբին Շու-չում կայացած քաղաքային դումայի ձայնաւոր-ների ընտրութիւնների մասին: Այդ յօդուա-ծում, ի միջի այլոց, գրված է. «Մշակի» ըն-թերցողներին յայտնի է, թէ ինչ աղմուկներով ընտրութիւններ կայացան եւ թէ ինչպէս թուր-քերը, քաղաքապետի աջակցութեամբ, աշխա-տում էին ընտրութեամբ հայ եւ թուրք ձայ-նաւորների թիւը հաստատելու: Այդ բանը, ի հարկէ, չաղովկեց, որովհետեւ վարչութեան ան-դամ Մարգարեանց չը համաձայնեց քաղա-քապետի կարծիքի հետ եւ իր առանձին կար-ծիքը յայտնեց նախագահներին, թէ քաղա-քապետը ոչ թէ օրէնքի հիման վրա է ցան-կանում հայ եւ թուրք ձայնաւորների թիւը հաստատելու, այլ ընտրութեամբ եւ օրէնքի իմաստը միանգամայն չը հասկանալով:

Թէ այս յօդուածը եւ թէ վերոյիշեալ ընտ-րութիւնները ընտրատուութիւններ են, որ գե-տեղված է «Մշակի» 68 համարում եւ նրա այլ համարներում տպված նոյնօրինակ յօդուածնե-րը ինձ պարտաւորեցնում են ծանօթանալ ըն-թերցող հասարակութիւնը գործի ճշմարիտ հանգամանքներին հետ:

1900 թվականի մարտի 2-ին կայացած Բարձ-րագոյն հրամանը *) կողմաւ կառավարչապե-տին իրաւունք է տալիս աւելացնել ոչ-քրիս-տոնեայ ձայնաւորների թիւը, ի նկատի չառ-նելով քաղաքում ապրող քրիստոնեաների թի-ւը, քաղաքային օրինագրի 44-րդ յօդուածում ցոյց տուած չափից, կողմաւ այն քաղաքները զուգանքներով, որոնք պէտք է նորոգվեն 1900 թվին: Առաջնորդելով այդ հրամանով իշխան կառավարչապետը, ինչպէս այդ երեւում է նա-խագահան իշխանութեան մեզ տուած հրա-նայնքի, որոնց հաւատարմեցիք քրիստոնեայ եւ ոչ-քրիստոնեայ ձայնաւորների թիւը: Կա-ռավարչապետի այդպիսի ստորիշխութիւնը հա-մարում էր երկու մտքով: Մի քանիսը այն-պէս էին կարծում, թէ ոչ-քրիստոնեայ ձայ-նաւորների թիւը պէտք է կազմէ ընդհանուրի կէտը միայն այն դէպքում, երբ բոլոր քուէարկ-ված անձանց ստացած ձայների մեծութեան կարգով դասաւորելու ժամանակ, 40 հոգի ընտրվածների կէտը կը կազմեն ոչ-քրիստո-նեաները: Կողմաւ զէպտում վերջինների թի-ւը պէտք է սահմանափակվի այն թուով, թէ քանի հոգի կան ընտրելիք 40 ընտրվածների թվում: Միւսները ընդհակառակն՝ այնպէս էին կարծում, թէ ընտրվածներից ձայնաւորների ցուցակ կազմելիս, իւրաքանչիւրի ստացած ընտ-րողական ձայների մեծութեան կարգով, հար-կաւոր է ի նկատի ունենալ քրիստոնեաների ստացած ընտրողական ձայների թիւը առան-ձին եւ ոչ-քրիստոնեաներինը առանձին. այն-պէս որ քաղաքային ձայնաւորների թվում հար-կաւոր էր ընդունել ոչ-քրիստոնեաների ընդ-հանուր թիւից այն 20 հոգուն, որոնց ստացած ընտրողական քուէները մեծութեամբ իրաւունք էր տալիս ձայնաւոր լինելու: Յիշելով ստորի-նութեան երկուստեակ մեկնութեան թիւը մի-ջոյթիւնը բացատրվեց պ. նախագահապետից ստացած հետեւեալ հեռագրով: «Ոչ-քրիստոնեայ ձայնաւորների եւ իրաւասուների թիւը, նորին պայծառափայլութեան (կառավարչապետի) հը-րամանով, պէտք է կազմէ Շուշում ձայնաւոր-ների ընդհանուր թիւի կէտը»:

Անցեալ դեկտեմբեր ամսի 1-ին կայացած ընտրութիւնները այս հետեւեալն ունեցան:—Քուէարկվածների ընդհանուր թիւից 50 հոգին, ստացած ընտրողական ձայների առաւելու-թեամբ, համարվում էին ընտրված, որոնցից 32 քրիստոնեաներին էին, իսկ 18 ոչ-քրիստո-նեաներին: Ձայնաւորների ցուցակ կազմելիս, իւրաքանչիւրի ստացած ընտրողական ձայների թիւի առաւելութեան կարգով, հարկաւոր էր, յօդուածի հեղինակի կարծիքով, ձայնաւոր ընտ-րել քրիստոնեաներից 26 եւ ոչ-քրիստոնեա-րից 14 հոգի, իսկ միւսներին ընդունել կան-գիւղատ, եւ այդպիսով ընտրութիւնները կը վերջանային: Բայց այժի առաջ ունենալով վե-րոյիշեալ ստորիշխութիւնը, հարկաւոր էր ընտ-րել բոլորովին այլ կերպ. այսինքն ձայնաւոր ընդունել 20 հոգի քրիստոնեաներից, իսկ ոչ-քրիստոնեաներից բոլոր 18 հոգուն: Բայց որով-հետեւ այդ կերպով ձայնաւորների օրինաւոր թիւը չէր լրանում, այս պատճառով նշանակ-վեց լրացնելու ընտրութիւն: Թէպէս այդ ժա-մանակն էլ, ինչպէս եւ յետոյ, անգամ Մարգա-րեանց չը համաձայնեց ուղարկել այդ ան-

րինութեան եւ գրեց իր առանձին կարծիքը, բայց վերջինս, ինչպէս երեւում է նախագա-կան իշխանութեան վճռից, ոչինչ հետեւեալ չէ ունեցել, որովհետեւ թողնել է առանց հայեցողութեան: Միայն չնորիւ քուէաւելե-րի մէջ գտնված քուէների թիւի անհամապա-տասխան լինելուն ընտրողների թիւի հետ, կա-յացած ընտրութիւնները անվաւեր ճանաչվեցին եւ նշանակվեց նոր ընտրութիւն փետրվարի 1-ին:

Նոր ընտրութիւնների նախընթաց օրը, այ-սինքն յունվարի 31-ին, պ. նախագահապետից հեռագիր եկաւ այս բովանդակութեամբ. «Բարձ-րագոյն հրամայված է քաղաքային օրինագրի 44-րդ յօդուածը վերածել այսպէս. ոչ-քրիս-տոնեայ ձայնաւորների թիւը պէտք է լինի ոչ աւելի մէկ հինգերորդից, իսկ Կողմաւ քա-ղաքներում ոչ աւելի ընդհանուր ձայնաւորնե-րի թիւի կիսից»:

Համեմատելով 1900 թիւ մարտի 2-ի Բարձ-րագոյն հրամանը ստացած հեռագրի իմաստի հետ, եւ եկալ հետեւեալ եզրակացութեան. 1) թէ այն դումաներում, որոնք պէտք է նորոգ-վեն 1900 թվականին, կառավարչապետին չնորիւ իրաւունք ոչ-քրիստոնեայ ձայնա-ւորների թիւը մեծացնելու: 2) թէ 44-րդ յօդու-վում է միայն 1900 թվականին կառավարչի ընտրութիւններին, այսինքն գործադրելի է մի-այն մէկ անգամ: Այդ դէպքը դումաների սո-վորական նորոգումների մէջ բացառութիւն է կազմում, եւ որովհետեւ 44-րդ յօդուածը իր նոր բովանդակութեամբ վերաբերում էր առ-հասարակ բոլոր դումաների նորոգումների ընդհանուր կարգին, այս պատճառով այդ յօդուածը չէր կարող նշանակութիւն ունենալ ներկայ դիպագումը: 2) թէ 44-րդ յօդուածի փոփոխութեամբ կառավարչապետին չնորիւ իշխեալ իրաւունք չէ վերացվում, եւ վերջա-պէս 3) եւ որ ամենադիւրեւոր է, թէ 44-րդ յօդուածի փոփոխված բուն իմաստով Անդրը-կովկասի քաղաքներում քրիստոնեայ ձայնա-ւորների թիւը պէտք է լինի ոչ աւելի ձայնա-ւորների ընդհանուր թիւի կէտից: Որովհետեւ կառավարչապետի ստորիշխութեամբ էլ պա-հանջվում էր ընտրել էլի միայն կէտը, այս պատճառով փոփոխված յօդուածը ներկայ ընտ-րութիւններին գործադրելիս անգամ, յիշեալ ստորիշխութիւնը չէր հակասում օրէնքին:

Չեմ իմանում, թէ ինչ համոզում կունենար յօդուածի հեղինակը վերոյիշեալ Բարձրագոյն հրամանը եւ հեռագիրը գործադրելիս, բայց եւս առաջնորդելով դրանցով եւ ի նկատի ու-նենալով այն հանգամանքը, որ ոչինչ չը կար այն մասին, թէ կառավարչապետի իշխեալ սո-վորութիւնը կորցրել է իր ոյժը, այն համոզ-ման կայ, թէ քանի որ կառավարչական հա-ղորդաւորութիւն տեղի չէ ունեցել, որը վրձ-նականապէս հակասում ձայնաւորների թի-ւի հաւատարմեցիկուն, յիշեալ ստորիշխութիւնը դեռ գործադրելի է իր բուն իմաստով: Թէ որքան ուղիղ է այս իմ կարծիքը, ասել չեմ կարող, բայց կարող եմ հաստատ ասել, որ ես առաջ-նորդելով յիշեալ ստորիշխութեան եւ հեռագրի իմաստով, չէի կարող ուրիշ համոզում ունե-նալ—թէ այսպէս թէ այնպէս, եւ հետեւեալ օրը, փետրվարի 1-ին, ընտրութիւնները սկսե-լուց առաջ, ընտրողական ժողովում կարգադի-ստացած հեռագիրը, իսկ յետոյ, յիշելով նրանց նախկին ստորիշխութեան մասին, յայտնեցի, որ պէտք է առաջնորդվել նրանով, քանի որ այդ ստորիշխութիւնը իր յոյժը չէ կորցրել: Այնու-հետեւ սկսվեցին ընտրութիւնները: Վերջնա-յուց յետոյ երեւեալ, որ քուէարկված անձանց ընդհանուր թիւից ընտրողական ձայնի ստա-ցել էին—քրիստոնեաներից 31 եւ ոչ-քրիստո-նեաներից 26 հոգի: Թէպէս ընտրված անձանց, ստացած ընտրողական քուէների առաւելու-թեան կարգով ցուցակ կազմելիս, երեւեալ, որ այդպիսինից 40 հոգին, որոնք պէտք է օ-րէնքով համարվէին զուգանք ձայնաւորների, 26 հոգի քրիստոնեաներ էին, իսկ 14-ը ոչ-քրիս-տոնեաներ, բայց ի նկատի առնելով կառա-վարչապետի ստորիշխութիւնը, հարկաւոր էր 26 քրիստոնեաներից ձայնաւոր ընդունել միայն 20-ին, իսկ 14 ոչ-քրիստոնեայ ձայնաւորների վրա աւելացնել եւ ձայնաւոր ընդունել այն ոչ-քրիստոնեաներին, որոնք ստորիշխական կար-գով համարվում էին կանգիւղատ:—Անա այդ պայմանների համաձայն՝ կազմվեց օրէնքով պահանջված ձայնաւորների ցուցակը, նշանա-կելով դրա մէջ թէ իւրաքանչիւրի ստացած ընտրողական եւ ոչ-ընտրողական քուէների թիւը եւ թէ ուղարկվալի այդ տեսակ դասա-ւորելու պատճառները: Մի եւ նոյն կերպով ընտրութիւն է կայացել եւ Գանձակում, ու թէպէս այնտեղ էլ քրիստոնեայ ձայնաւորները մեծամասնութիւն են կազմել, բայց նրանցից ընտրվել է միայն կէտը: Այդ մասին Գանձակի քրիստոնեաների բողոք մնացել է առանց հե-տեւանքի: Բայց այդպիսի դասաւորութեան վարչութեան անգամ պ. Մարգարեանց չը համաձայնեց եւ ուղարկվալի ներկայացրեց դրաւոր կերպով իր կարծիքը, որ ձայնաւոր-ների ցուցակի եւ ընտրողական թիւերի հետ միասին առաջարկեց նախագահին իշխանու-թեան:

Իր կարծիքում պ. Մարգարեանցը ոչինչ մի այդպիսի բան, որ յօդուածի հեղինակը վերա-գրում է նրան, չէ ասել եւ չէր էլ թոյլ տալ ասելու, քանի որ իր կարծիքը պայմանական ձեւ տալը լրագրական թղթակցութիւն չէ: Մարգարեանցի կարծիքը իր մէջ պարունա-կում է միայն այն, թէ ընտրվածներից ցու-

ցակի մէջ ձայնաւորներ եւ կանգիւղատներ դա-սաւորելու համաձայն չէ քաղաքային օրինա-գրի 46-րդ յօդուածին, որի հիման վրա հար-կաւոր էր քրիստոնեաներից ձայնաւոր համա-րել 26, իսկ ոչ քրիստոնեաներից 14 հոգի, եւ ոչինչ ընտրութեան, որը, ի հարկէ, ներկայ հան-գամանքում մինչեւ անգամ կարելի չէ երեւա-կայել, կարծիքի մէջ նշոյլ անգամ չը կայ:—Չը կայ նոյնպէս ինձ վերագրած օրէնքի գործա-դրութեան մեղադրանքը:

Անա գործի իսկական հանգամանքները, եւ նրանք շատ լաւ յայտնի են ոչ միայն «Մշակի» յիշեալ յօդուածագրերին, այլ եւ քիչ թէ շատ ընտրութիւններով հետաքրքրվող քաղաքացի-ներին, որովհետեւ ես միշտ եւ բոլորովին բացարձակ կերպով յայտնել եմ ամենին իմ համոզմունքը եւ բացատրել գործի ընթացքը:

Անա գործի հանգամանքը, Դիցուք թէ ուղ-բավայի վճիռը ձայնաւորների թիւը հաւասա-րեցնելու մասին նախագահական իշխանութիւնը չէ հաստատել, թէպէս ես չեմ կարծում թէ դա Մարգարեանցի կարծիքի հետեւեալն է, բայց եւ նոյն իսկ յիշեալ վճիռը, որը փոխել է նախագահական իշխանութիւնը, ոչ ոքին իրա-ւունք չէ տալիս գրել գործի եղելութիւնը յե-ղաշրջում, որով, իմ կարծիքով, ոչ մէկին օ-գուտ չի բերի, այլ ընդհակառակը՝ ընթերցող հասարակութեան մէջ սուտ լուր տարածելը վնասակար կերպով է աղեղնեցնում անում:

Չը նայելով ուղարկվալի վճիռ նախագահա-կան իշխանութեան կողմից անհիմն ճանաչվելուն, այնուամենայնիւ ես այժմ էլ ընտրութիւնների վերաբերեալ մի եւ նոյն վերոյիշեալ համո-զումն ունեմ եւ ոչ ոք չէ կարող այս մասին ինձ մեղադրել:

Քաղաքապետ Կ. Դանիէլեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

«Мок. Губ. Вѣд.» լրագրում տպագրված է Նորին Կայսերական Բարձրութիւն՝ Մոսկվայի գեներալ-նախագահական հետեւեալ ազդարա-րութիւնը. «Որովհետեւ վճիռներ եւ կոխներ ժամանակ յաճախ գործ են ածվում դայոյններ եւ այլ սառը զէնքեր, եւ նրանցով վի-րաւորում, խեղաթիւրում եւ երբեմն էլ մահ են պատճառում, ուստի Սա, սատա-կարած հակողութեան վերաբերեալ օրէնք-ներ 16-րդ յօդուածի եւ 16-րդից ա. կէտի գործութեամբ, հրատարակում եմ հետե-ւեալ պարտաւորական կանոնները:—1) արգել-վում է պահել մօտը դանակներ, բացի այն դէպքերից, երբ այդ պահանջում է մարդու պարտաւորանք կամ արհեստը, արգելվում է պահել նաեւ կոպալներ: 2) Այս բանի մէջ յանցաւոր գտնվածները ենթարկվում են վարչ-ական կարգով մինչ 500 ռուբլի տուգանքի կամ բանտարկութեան մինչեւ 3 ամիս: 3) Այս կանոնները պարտաւորական են Մոսկվայի նահանգի բոլոր ընտրիչների համար եւ գործա-դրական ոյժ են ստանում հրատարակմանից երկու չափ յետոյ»:

Արեւելագիտութեան ընկերութիւնը մտա-դրութիւն ունի հրատարակել մի ամսագիր-լրա-գիր հուսերէն—պարսկերէն լեզուներով:

Մեզ խնդրում են հաղորդել, որ այսօր, մայիսի 4-ին, երկուցեան 8 ժամին, պէտք է տեղի ունենայ կողմաւ կայսերական գիւ-ղատնտեսական ընկերութեան ժողովը, ընկերու-թեան դահլիճում: Պարագմունքի առարկաներն են. —1) ընթացիկ գործեր, 2) Թիֆլիսի այդգոր-ծական ուսումնարանի անտեսական մասնաժողո-վի գեկուցումը բողոքներ եւ հաշիւների ընդունե-լութեան մասին ուսումնարանի կառավարից, 3) ընկերութեան երեւմուտքի նախահաշիւը 1901 թվականի համար: Նիստին կարող են ներկայ լինել կողմակի անձինք:

Ներքին գործերի մինիստրի նախագահու-թեամբ սկսվել են խորհրդակցութիւններ՝ քըն-նելու գէտաւոյթի հիմնարկութիւններ մտցնելու նախագիծը այն նախագիծերում, որտեղ չեն մտցրել 1900 թվին հրատարակված գէտա-վոյթի վերաբերեալ օրէնքները: Իր ձառի մէջ մինիստրը մտանցողը արաւ այն պակա-սութիւնները, որոնք կան գէտաւոյթի հիմնար-կութիւններ չունեցող նախագիծերի անտեսա-կան վարչութեան մէջ: Այդ պակասութիւննե-րը իրանց վրա են դարձրել պետական խոր-հրդի ուղարկութիւնը:

Կիւմից հեռագրում են «Россиа» լրագրին. «Հէրայ բոլշիններն, Ֆելդշերներն եւ մանկա-բարձուհիներն ոստիկանութիւնը արգելում է ապրել Կիւմի գաւառի ամարանոցներում»:

Կառավարութիւնից թոյլտուութիւն է ստաց-

*) Собр. узакон. 1900 г. № 60.

ված հրատարակելու Եկատերինոսլավում մի նոր լրագրի՝ «Вѣстникъ Юга» անունով:

ՉԱՐԴԱՆԻՈՒ գիւղից (Գանձակի գաւառ) մեզ գրում են. «Ապրիլի 22-ին, առաւօտեան ժամի 10-ին, մեր գիւղը ժամանեց Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցին Գանձակի նահանգապետի եւ ուրիշ շատ աստիճանաւորների ուղեկցութեամբ: Հասարակութիւնը, հոգեւորական դասը եւ տեղիս երկրասեան դպրոցի տաները իրանց ուսուցչի հետ միասին դիմաւորեցին իշխանին «ուրախ երկերով»: Աշակերտները մէկը եւ մէկ աշակերտուհի մատուցին իշխանին ծաղիկ փնջեր, իսկ գիւղական համայնքը—աղ ու հաց: Իշխանը համբուրեց խաչ ու աւետարանը, հարցրեց ժողովրդի ապրուստի եւ նիստ ու կացի մասին, 1/4 ժամից յետոյ կառք նստեց եւ մեկնեց Նովո-Գոլիցին, գաղթականների գիւղը, ուր եւ կէսօրին նրա ներկայութեամբ օձկեց եկեղեցու հիմքը: Հետեւեալ առաւօտեան իշխան կառավարչապետը մեկնեց Գետաբէզի պղնձանիւքի գործարանը տեսնելու եւ երկրոյեան ժամի 4-ին կրկին դարձաւ Չարդալու, ուր, մի քանի րօպէ կանգ առնելով, հարցրեց ուսումնարանի աշակերտների որքանութիւնը եւ ուսումնարանի դրութեան մասին. 20 րօպէի՝ աշակերտներին քաղցրանիք բաժանելու համար՝ յանձնեց դպրոցի աւագ-ուսուցչի՝ Աղայեանցին եւ ուրախութեան ձուրները՝ աղայեանցիով մեկնեց գէպի «Դաւլար» երկաթուղու կայարանը:

Հին-ՆԱԽԻՋԵՆԻՍԻՆ մեզ գրում են. «Անցեալ օրը Բիւլեթնի գիւղում երկու հարեւանների մէջ կռիւ է ծագում գիւղական կանանցում յաճախ տեղի ունեցող չնչին եւ ուշադրութեան անարժան պատճառով: Կռիւ մէջ մի երիտասարդ ենթարկւում է յարձակման մի քանի հոգու կողմից: Անհաւասար կռիւ մէջ, ճարձկ Կրտած, երիտասարդը դաշտին հարուածներով սպանում է մէկին եւ մահանման վերջ հասցնում չորս հոգու: Մարդասպանին այսօր կայանաւորեցին եւ ուղարկեցին քաղաքային բանտը:

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են. «Այս րօպէիս Կալթիսիւն գիւղից եկան տեղիս հոգեւոր կառավարութիւնը մի քանի հայ գիւղացիներ եւ յայտնեցին, որ վերոյիշեալ գիւղի քահանայի զգուշի արարքներից ստիպւած՝ քանի եւ երկու հայ ընտանեկ վաղը, կիրակի օրը, կրօնափոխ են լինելու: Այս լուրը հասնելուն պէս՝ յաջորդէ իր հետ վերցրեց երկու էլ ուրիշ քահանաներ եւ իսկոյն ուղեւորվեց գէպի այն գիւղը: Թէ ինչպէս կը վերջանայ այս գործը, վերջը կ'իմանանք, իսկ այժմ կանան, որ շատ զարմանալի է, որ լինեալ քահանայի արարքներից անցեալ տարի էլ մի քանի ընտանեկ կրօնափոխ եղան եւ մեր հոգեւոր իշխանութեանը այս ամենը քաջ յայտնի է, բայց ինչու նա լռում է, ինչու չէ հետաքննում նրան այս գիւղից եւ չէ աղաւթում ժողովրդին կրօնափոխ լինելուց: Քանի անգամ ամբողջ գիւղը գնացել է առաջնորդարան եւ գանաւաժիկ է, բայց բոլորը իզուր:

ՇՈՒՇԻՔԵՆԻՆԻՑ (Շուշու գաւառ) մեզ գրում են. «Այս տարվայ ձմեռը տաք եւ չորալին անցաւ: Այդ տեսակ ձմեռ գոնէ այստեղ, Դարաբաղում, հազարէպ բան է համարվում: Յունվար ամսին մի քանի ծառեր սկսել էին ծաղիկ, որ չը տեսնված բան է: Երաշտը, քիչ բացառութեամբ, շարունակվեց մինչեւ ապրիլի 12-ը, որ քիչ վիճակներ չը տուեց տափարակ տեղերին: Երաշտն էր պատճառը, որ տափարակ տեղերում յայտնված մորեխը չը կարողացաւ վնասել արտերին, որովհետեւ երաշտից արտերը հաւասարվել էին գետին (բացառութիւն են կազմում ջրովի արտերը): Դեռ նոր ձուերից դուրս եկած մորեխները կոտորվում էին: Թէեւ նահանգական իշխանութեան հրամանով մեր գաւառից գիւղացիներ էին գնացել մորեխ կոտորելու, բայց իզուր. մորեխները, կերակուր չը ճարելով՝ իրանք իրանց կոտորվում էին: Գոնէ այսպէս են պատմում տեղացիները: Ապրիլ ամսից իր հետ բերեց արտերի համար կենսատու անձրեւներ: Առաջին անգամ այս ամսին անձրեւներ տեղացին 12-ից մինչեւ 15-ը, իսկ 10 օր ընդմիջումից յետոյ, ահա չորրորդ օրն է, որ շարունակ անձրեւ է գալիս: Մարահարկներում աշնանացան հացադաշտերը լաւ են եւ առատ հունձ են խոտատում: Լաւ են եւ գարնանացանները՝ կրկնում են, այս տարի հունձը առատ կը լինի, եթէ միայն մայիսը, որ գիւղացիներին համար ամենակրկնապիւր ամիսն է տարվայ

մէջ, զինված չը մանի ու աւերումներ չը գործէ: Դաշտային տեղերում, ինչպէս պատմում են, թէեւ այս անձրեւները եկել են, բայց օգուտ չեն տուել, որովհետեւ երաշտը իրան գործը արած, վերջացրած է եղել: Երաշտից վնասված արտերը նորից հերկում ու կորեկ են ցանում: Պարագաւ ծառերը եւս (համաժամած անցեալ տարիների հետ) միանգամայն հիւսնալի հունձ են խոտատում, եթէ դարձեալ ընտելեան արհաւիրքներից ազատ մնան:

ԱՍԽԱՐԱԿԻՑ մեզ գրում են. «Մարտի 25-ին մեր աղօթատան բազում պապ հաշտեանները հասարակութեանը ներկայացրին երէց-փոխ երկամեայ հայիւր, Կազմված արձանագրութիւնից երեւաց, որ ներկայ երէցփոխ պապը հեղինակն օրով եկեղեցու տարեկան արդիւնքը նախորդ տարիներից կրկնապատիկ աւելի է եղել: Ընդհանրապէս հայիւրները պահվել են կանոնաւոր: Ժողովին ներկայ եղողները, մանրամասն հաշիւները լսելուց յետոյ, շնորհակալութիւն յայտնեցին պապին եւ գոհ սրբաբան հետաքննողի պապին պէտք է խոտովանվել, որ մեր երէցփոխը պարտաճանաչ է եղել գէպի իր վրա դրված պարտաւորութիւնները: Նրա քանքերով նախ վերանորոգվեց ուսումնարանի շինութիւնը, որը այժմ ընակարան դարձաւ եւ որից ներկայումս եկեղեցին ստանում է 240 ր. տարեկան վարձ, եկեղեցու ամայի բազմ զարդարվեց ծառերով եւ դարձաւ մի զբոսայտ, շինվեցին մի շարք շինութիւններ եւս եկեղեցու ալլ սպասարանների համար, արդիւնքները այժմ ունի երեքեկ քառասուն խումբ, որի նման ժողովուրդը աւելի սիրով է յաճախում եկեղեցին:

ԻԳԻՐԻՑ մեզ գրում են. «Երաշտը այստեղ մեծ վնաս հասցրեց աղգաբնակութեան, այնպէս որ այժմ գիւղացիին չունի անցեալ տարվայ խոտի (եռնջայի) աւելները, բոլորը վերջացել է. շատերը կերցրին իրանց տաւարին, իսկ շատերը ծախեցին բարձր գնով: Խոտ չէ ճարվում իգրիւմ եւ մօտիկ չընկալւում, այնպէս որ ստիպւած են լինում գնալ Իգրիւրից մօտ 20—40 վերստ հեռու խոտ գնելու: Ծորներ եւ ալիւրը շատ թանկ են: Դիւղացիները միշտ «բանդ» են գնում ջուր բերելու Երասխից, որ ջրին ցանք սերը: Օրերով չարչարվում, մեծ նեղութեամբ ջուր են կապում բերում, բայց այդ ջուրը մի հինգ օր էլ չէ տեսնում եւ էլի ջրի պակասութիւն է զգացվում: Այս տարի Երասխի ջուրը նախորդ տարիներից անհամեմատ պակաս է: Ապրիլի 24-ին հրամայված էր, որ իւրաքանչիւր տնից մի բանուոր (ֆահլա) պիտի բանդ գնար Երասխից ջուր կապելու եւ, ի հարկէ, գիւղացին պարտաւորվում էր հրամանը կատարելու: Բայց երկրից խզեց վերջապէս եւ հինգ ժամ շարունակ այնպէս առատ անձրեւ տեղաց, որ առեւները լցվեցին անձրեւի ջրերով եւ երթեւեկութեանը արգելվեց փողոցներում: Եթէ անձրեւները այդպէս կրկնվեն մի քանի անգամ, վերջապէս գիւղացին կը կարողանայ վերականգնել իր ընտանիքի քայքայված դրութիւնը:

ԱԽԱՆԻՑԱՅԻՑ մեզ գրում են. «Կիրակի, ապրիլի 29-ին, քաղաքային օրինորդաց ուսումնարանի դահլիճում, յօգուտ տարրական ուսումնարանների չքաւոր երկսեռ անների տեղի ունեցաւ մի ժողովրդական համերգ (կօնցէրտ) քաղաքիս Գ. Փրկիչ եկեղեցու խմբապետ պ. Տէր-Կարապետեանի ղեկավարութեամբ: Համերգի ղեկավար խումբը կազմված էր երկուսեռ 50 երգիչներից, որոնք երգեցին մինչեւ 15 երգեր: Երգերից ղեկավարապէս աչքի ընկան հետեւեալ երգերը՝ «Բամբ որոտան», «Հարբբան», «Հայաստանի արեգակը», «Անա ծագեց կարմիր արեւ» եւ այլն: Ժողովրդական երգերը, որոնք կրկնվեցին մի քանի անգամ: Քառասուն խմբի օւթները մէջ դրաւորապէս աչքի էր ընկնում իր գեղեցիկ ձայնով պ. Հայրապետեան, որ արժանացաւ բոլոր ծափահարութիւնների: Համերգում մէջ ընդ մէջ կարգացվում էին ուսանաւորներ, թէ ուսերէն եւ թէ հայերէն: Ժողովուրդը գոհ մնաց համերգից եւ երախտագիտութիւնը եւ շնորհակալութիւնը յայտնեց խմբապետ պ. Տէր-Կարապետեանին, որ ամիսներ էր աշխատել անխորձ անձրեւի քառասուն խումբ կազմելու համար: Բացի որդիները տուին մի ներկայացում: Խաղացին Մօլիէրի «Բոնի ամուսնութիւն», որը շատ ուրախացրեց եւ ծիծաղեցրեց ժողովրդին:

ԿՈՒԼԻԲԵ-ԴԻՉԱ գիւղից (Հին-Նախիջեանի գաւառ) մեզ գրում են. «Ապրիլի 16-ին եկաւ կարկուտ, որ զգալի վնասներ պատճառեց թէ ծառապտուղներին, թէ այգիներին եւ թէ արտերին: Կարկուտ հատիկները բաւական խոշոր լինելով՝ կոտորեցին լուսամուտների ապակիներ եւ վազերի նորարար մատերը, բայց, բարեբաղդաբար, մեծ տարածութեան վրա չեկաւ: Կարկուտը եւ կրկար էլ չը տեսնեց: Համեմատաբար շատ են վնասվել Մաղա, Մամարզա-Դիզա, Նաղարապատ, Ուզուն-Օթա եւ Խազե-մէլ գիւղերը: Լաւեմ են, որ գիւղացիները դիմել են գաւառապետին եւ տանուտէրը կազմում է վնասների ցուցակը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ
(Նամակ Թաւրիզից)

Ապրիլի 22-ին, կէսօրից յետոյ, պատգամաւորների ընդհանուր ժողովում, Այվատեան եպիսկոպոսի նախագահութեամբ, տեղի ունեցաւ առաջնորդական ընտրութիւն: Պատգամաւորները միաձայն Ատրպատականի թեմակալ ընտրեցին Ատրաբայի թեմակալ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանին, որով կատարվեց ժողովրդի բազմաձայն: Այս ընտրութիւնը ցոյց տուեց, որ պատգամաւորներն, իրանց ունեցած իրաւունքն օգտակար կերպով գործադրելով, ժողովրդի վստահութիւնն արդարացրին. միւս կողմից սա մի ապացոյց է, որ Ատրպատականի հայութիւնը իր նոր ստացած արտօնութիւնը խելացի կերպով գործածել եւ շատ լաւ ընտրութիւն անել կարող է: Հարցն այնտեղ է, թէ արդեօք Սեդրակեան եպիսկոպոսը կը համաձայնի Թաւրիզ գալ, թէեւ, ասենք, եւ այդ բանում հաստատ համոզված ենք, որ ներկայ պայմաններում Ատրպատականը շատ կարեւոր թեմ է ներկայացնում: Սեդրակեան եպիսկոպոսի համար այստեղ գործելու շատ լայն ասպարէզ կայ: Կան շատ բազմաթիւ խնդիրներ, հարցեր եւ յետադաւում էլ առաջ կը գան աւելի եւս կարեւոր խնդիրներ, որոնց բարեխաղ լուծման Սեդրակեան եպիսկոպոսի պէս թեմակալներ միայն ուղղութիւն տալ կարող են:

Թէ պատգամաւորների եւ թէ Այվատեան եպիսկոպոսի կողմից ընտրութեան արդիւնքը հետազոտվեց Ատրաբայում:

Մինչեւ երէկվայ ժողովը, միմեանց հակասող լուրերի ազդեցութեան տակ, ժողովուրդը տեղային գործման մէջ էր: Խօսվում էր, թէ իբր պատգամաւորների մի որոշ խումբ մտադիր է իր ձայնը տալ մի այնպիսին, որ անընդունակ է թեմակալութեան գործին: Ժողովրդի հասկացող դասին—մեծամասնութեան—յուզում էր այդ, որովհետեւ վերջին տարիներս այնպիսի թեմակալներ ունեցանք, որ ազատ իրանց պաշտօնին եւ անհամապատասխան իրանց վնաս կուշման, ոչ միայն ժողովրդին ստուգեցին առաջնորդարանից, առեւտրութիւն սերմանեցին ժողովրդի մէջ միմեանց եւ իրանց դէմ, շատ գործերի թղթ եւ երկդիմի կերպով վերաբերվեցին, այլ մինչեւ անգամ Պարսից կառավարութեան առաջ ունեցած մեր հոգեւորականութեան վարկը գցեցին: Հետեւապէս ժողովուրդը Ատրպատականի թեմում ուղում էր տեսնել մի այնպիսի հեղինակաւոր եւ լուրջ գործող հոգեւորականի, որ բացի իր նախորդների սխալն ուղղելուց, կարողանայ պաշտպանել ժողովուրդը եւ գիւղական աղգաբնակութեան, առիթ եղած դէպքերում, «զարդին» հանդի: Իսկ երէկվայ ընտրութիւնը ոչ միայն այդ յուզումները հանդարտեցրեց, այլ եւ ժողովրդի բազմաձայն կատարելով, սրտերն ուրախութեամբ լցրեց, որ բոլորովին կատարեալ կը լինի, երբ բախտ կունենայ իր թեմական աթոռի վրա բազմած տեսնելու նորընտիր թեմակալին:

Պարսկաստանում հայոց բարեկեցութեան եւ պաշտպանութեան խնդիրը մեծ մասամբ կախված է առաջնորդներից, իբրեւ կառավարութեան առաջ հայոց ներկայացուցիչներից թէ մարմնաւոր եւ թէ հոգեւոր գործերում: Առաջնորդը շատ մեծ ոյժ ունի այստեղ, եթէ կարողանայ իր բարձրութեան վրա կանգնել եւ վարկ ու հեղինակութիւն վայելի կառավարութեան առաջ: Այսպիսի եպիսկոպոսի ամեն մի դիմում ու խնդրելը, որ վերաբերում է հայերին, կառավարութեան առաջ կը յարգվի: Ահա այս բոլորն ի նկատի առնելով՝ ժողովուրդը մեծ ցանկութեամբ ընկն Սեդրակեան եպիսկոպոսին իր թեմակալը տեսնելու:

Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ

մեր խնդիրներն ունենում ստույգով կամ անհամապատասխան եւ կամ ուրիշ պատճառներով ասպարէզից քաշվել եւ հիստափութիւն առաջանել կարող է, հասարակական զանազան գործերում շատ շուտով իր չէզոքութիւնը պահպանելով, բարեմաղթենք, որ ներկայ տրամադրութիւնն ու եռանդն անչէջ մնան ինտելիգենցիայի մէջ, որ թէ յետագայ ուրիշ կամ նոյն օրինակ ընտրութիւնների ժամանակ, եւ թէ ուրիշ հասարակական գործերում առաջնորդվելով հասարակական շահերով եւ ժողովրդին ուղիղ շաղկով առաջնորդելու ձգտումով, այսպէս խելացի կերպով վերաբերվի դէպի իր պարտականութիւններն եւ ժողովրդի վստահութիւնը ձեռք բերէ: Պատգամաւորական ընտրութիւնների ժամանակ Թաւրիզի երկտասարգութիւնը՝ ոչ բոլորը, ի հարկէ) այնպիսի կարեւոր դեր կատարեց, որ չը խոտովանել այդ չէ կարելի:

Բայց կրկին ասում ենք, ցանկալի է, որ այս եռանդը յարատեւ լինի, որովհետեւ մենք մի վատ կողմ ունենք.—երբ դեռ մենք մի որ եւ կից իրաւունքից, ազատ գործողութիւնից զրկված ենք, անհնարուն կերպով տնչում ենք, աշխատում ձեռք բերել այդ իրաւունքը: Սկզբից խօսում ենք այն հրաշքների, օգտակար գործողութիւնների եւ դրանց հետեւող արդիւնքների մասին, որոնք պիտի երեւան, հէնց որ տիրենք այդ իրաւունքներին—մի այնպիսի վստահութեամբ, որին չը հաւատալ անկարելի է: Բայց երբ այսպէս թէ այնպէս ստացվում է վաղուց ցանկալի իրաւունքը, ձեռք է բերվում տնչալի արտօնութիւնը, պատկերն ուրիշ կերպարանք է ստանում:

Մեր սկզբից խօսածների, մեր երազների շատ քիչն է իրականանում, որովհետեւ—եթէ ոչ սկզբում, երբ դեռ չարունակվում է մեր ոգեւորութիւնը, այլ քիչ յետոյ—յետ ենք քաշվում, կամ թէ պարծեցած մեր իբր թէ լաղթութեամբ բաւական համարելով ստացած իրաւունքը, թուլութեամբ ենք վերաբերվում դրան, շատ քիչ ենք աշխատում գործադրել եւ օգտակար գործադրել, ապա շուտով աչքից գցում ենք մի ոչ այնքան կարեւոր—այլ շատ ընկալան բան—համարելով եւ բոլորովին մոռանում:

Հէնց այս է պատճառը, որ մի կողմ թողնելով պատգամաւորական ժողովներում տեղի ունեցած միայն անձնական շահագրգռութիւնից եւ կրքից առաջացած խօսքերն եւ դէպքերը (Լիւաւայի խմբից մի խումբ բողոք էին տուել վեհափառին, Լիւաւայի պատգամաւորական ընտրութիւնն ապօրինի համարելով)՝ այնքան կարեւոր նշանակութիւն ենք տալիս Թաւրիզի ներկայ ընտրութեան եւ նրանից առաջ եղած գործնականութեան, բարեմաղթելով որ յարատեւ լինի ոգեւորութիւնը եւ ժողովրդին օգտակար լինելու ձգտումը մեր երիտասարդութեան մէջ:

Փարս

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Times» լրագրի թղթակիցը, համաձայն վիշնայում ստացված տեղեկութիւնների, հազորում է, թէ թիւը գիւնուորները ամբողջ խմբերով փախչում են զօրքի շարքերից, որովհետեւ, գիւնուորական իշխանութիւնների անհոգութեան եւ անազնութեան պատճառով, նրանք հասել են վերին տատիճանի չքաւորութեան: Սովորաբար փախչող գիւնուորները միանում են ալբանացի, չէրքէզ եւ քիւրդ աւազակային խմբերին, որոնք կողոպտում են աղգաբնակութիւնը, առանց խորհրդի գնելու աղգութիւնների մէջ: Առհասարակ աւազակութիւնը այնքան տարածվել է, որ ան ուսարափ է գլչել ամենից վրա: Մոնասթիրի չընդունւ աւազակները դերի վերցրին մօտ 30 հոգու խաղաղ ճանապարհորդներից եւ տարան նրանց իրանց օրվերը, որտեղ պահեցին այնքան ժամանակ, մինչեւ որ փրկանք ստացան նրանց ազատման համար: Իսկ այն գիւնուորները, որոնք աւազակ են դարձել, բառացի մտքով չեն խնայում ոչ ոքի, ոչ մահմեդականներին, ոչ քրիստոնեաներին: Քանի որ նրանք յարձակումներ էին գործում միայն քրիստոնեաների վրա—կառավարութիւնը արշաւաւորում էր ծածկել նրանց քաջագործութիւնները, բայց այժմ, երբ նրանք իրանց գործունեութիւնը տարածեցին եւ մահմեդականներին վրա, երեւի նրա համար, որ քրիստոնեայ տարրը վերջին ժամանակ չափաւորեց աղգաւայել է, թիւրքական ամսուրի մէջ սկսեցին երեւալ տեղեկութիւններ յարձակումներ եւ կողոպտումներ մասին: Զօրքի մէջ նորից սկսում է դուրս բարձրացնել անիշխանութիւնը, որ մի ժամանակ տիրում էր նրա մէջ եւ, աչքի առաջ ունենալով երկրի ֆինանսական դրութիւնը, հազիւ կարելի լինի ենթադրել, որ այդ բանում կօչնէ նրան գերմանական զինուորական կարգապահութիւնը, որ մայրած է թիւրքական զօրքի մէջ եւ օրով այնքան պարծենում է Բ. Դուրը:

—Անգլիական կառավարութիւնը հրատարա-

